

8. Տիպաբանություն

Անշարժ գույքի առուվաճառքի միջոցով կիրառվող փողերի լվացման սխեմա

1) Կիրառելիության շրջանակը

Սույն տիպաբանությամբ¹ ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց՝

ա. բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ.

բ. անշարժ գույքի գրանցման պետական միասնական կադաստր վարող մարմին.

գ. ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք.

դ. նոտարներ.

ե. հաշվապահական և աուդիտորական ծառայություններ մատուցող անձինք.


զ. փաստաբաններ, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք:

2) Սխեմայի նկարագիրը

Ստորև ներկայացված տիպաբանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, կատարվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. «Ա» անձը, ով հանցավոր ճանապարհով ստացել է, օրինակ, 1.000 միավոր եկամուտ, համաձայնության է գալիս անշարժ գույք վաճառող «Բ» անձի հետ՝ վերջինիս առաջարկելով գնել նրա գույքը 1.000 միավորով, սակայն առուվաճառքի պայմանագրի մեջ որպես գույքի արժեք նշել 500 միավոր: Այնուհետև, «Ա»-ն գնված գույքը նույն 1.000 միավորի (կամ դրան գերազանցող գումարի) դիմաց վաճառում է «Գ» անձին, և արդյունքում ցույց է տալիս, որ իրականում հանցավոր գործունեության արդյունք հանդիսացող գումարը առաջացել է անշարժ գույքի վաճառքի շնորհիվ: Այս դեպքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագումը հետազայում քողարկելու նպատակով հնարավոր է, որ գնորդ-վաճառողի դերում հանդես գա օֆշորային ընկերություն:

¹ Տիպաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ՖԱԹՖ-ի կողմից 1997-1998թթ. հրապարակված տիպաբանությունները www.fatf-gafi.org;

3) Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



4) Եզրահանգում

ա. Վերը սահմանված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ: Այս սխեման բնութագրող չափանիշներն են՝

1) գործարքի փաստաթղթում նշված գնի անհամապատասխանությունը տվյալ գույքի իրական (շուկայական) գնահատված արժեքի հետ,

2) գույքի գնման և վաճառքի գործարքների միջև համեմատաբար կարճ ժամանակահատվածը (օրինակ՝ մեկ կամ մի քանի շաբաթ/ամիս),

3) գույքի սկզբնական վաճառողի կողմից վաճառքին հաջորդող ժամանակահատվածում վաճառքի գումարը էապես գերազանցող կանխիկ կամ անկանխիկ գործարքների իրականացումը,

4) գործարքի գումարի միջանկյալ և վերջնական վճարողների եկամտի ծագման աղբյուրի ոչ հստակ/կասկածելի լինելը,

5) ռիսկային (օֆշորային) գոտում գտնվող ընկերությունների ներգրավվածություն:

բ. Նշված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

1) հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն,

2) գործարքի հիմք հանդիսացող փաստաթղթերի հավելյալ ուսումնասիրություն,

3) գործարքի կատարման օրինականության ստուգում,

4) տեղեկատվության արդյունավետ փոխանակում իրավասու պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

